

ԱՇՈՒՂԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐԸ ԶԱԽԱԽՔԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹՈՒՄ

Զաւէն Թգակչեան

Ի թիւս Զաւախքի աշուղական բազում տարաբնոյթ ստեղծագործութիւնների մեջ բախտ է վիճակուել գրի առնել հոգեւոր բովանդակութիւն ունեցող աշուղական երգերի ութ նմուշ: Ըստ բանասացների հաւաստի տեղեկութիւնների՝ գրառած նմուշներից վեցն աշուղ Ղունկիանոս Կարնեցու ստեղծագործութիւններն են, որ գրանցուել են տարբեր բանասացներից:

Ինչպէս մեծն Սայաթ-Նովայի, այնպէս էլ Ղունկիանոս Կարնեցու երգերի ձայնագրութիւնների մեր տարբերակներն աւանդաբար փոխանցուել են սերնդէ սերունդ եւ գրեթէ անփոփոխ պահպանել են աշուղի յօրինուածքին բնորոշ եղանակաւորումների բոլոր հիմնական յատկանիշները:

Եթէ հաւաքական ամբողջութեան մէջ դիտարկելու լինենք Ղունկիանոս Կարնեցու գրչին պատկանող մեր գրանցած վեց նմուշի խօսքային կառոյցները, ապա, առաջին հերթին, ուշադրութիւն է գրաւում իւրօրինակ չափածոյ շարադրանքը, որտեղ կանոնաւոր, համաչափ կերտուածք ունեցող խօսքային կառոյցներում տողերի միջեւ վանկերի չափաքանակի տարբերութիւնները բնաւ չեն անդրադառնում երգի եղանակաւորման բնականոն ընթացքի վրայ:

Ասուածը լաւագոյնս երեւում է Ախալքալաքի Դիլիսկայ գիւղից բանասաց Ասողիկ Քորոյեանի ներկայացրած «Կռունկ, կռունկ, կռունկ» երգի խօսքային կառոյցի եւ եղանակաւորման փոխկապակցութեան պարագային (տես՝ նոտային յաւելուածի թիւ 1 օրինակը):

Առանձինն ներկայացնենք երգի բանաստեղծական բնագիրը՝ նշելով տողերում առկայ վանկերի քանակը:

Կռունկ, կռունկ, կռունկ,	6 վ.
Սիրտըս քեզ հետ կըռունկ	6 վ.
Սուր խաչեմէն կուգաս,	6 վ.
Ո՛ւր է ընկերդ կըռունկ	7 վ.
Սուր խաչեմէն կուգաս,	6 վ.
Սուր խաչեմէն կուգաս,	6 վ.
Ո՛ւր է ընկերդ կըռունկ,	7 վ.
Ախ, ինձի տաւան Վերին Սաչադան.	10վ.
Հըրեշտակին թոփ էղան,	7վ.
Վառուած սըրտիս ջուր կու տան,	7վ.
Լուսաւորայ խաթեր	6վ.
Լուս հաւտիս համար:	5վ.

Անհամաչափ տողերով կառոյցները յատկապէս ակնբախ դրսեւորում ունեն թուարկում պարունակող շարադասութիւններում: Դրանցում թուարկուող բառերի շարքում վանկերի քանակով տարբերուողները եղանակաւորմամբ եւս առաջացնում են չափակարգի ընդլայնումներ կամ սղումներ՝ չխաթարելով հանգչող կամ վերջաւորող դարձուածքների դերակատարման նշանակութիւնը՝ կատարելով դրանցում տարբերակային փոփոխութիւններ:

Վերջինիս վառ օրինակ կարող է հանդիսանալ Ախալքալաքի Կիրովական գիւղից բանասաց Մաթեոս Ղարազէօղեանի ներկայացրած «Ուր է Մայրամբք» երգը՝ շարադրուած է4/5 ձայնակարգում (տես՝ նոտային յաւելուածի թիւ 3 օրինակը), որի առաջին տունն ունի հետեւեալ վանկական կերտուածքը՝

Ո՞ր է Մայրամբ ԲՈ,	6 վ.
Ո՞ր է Որդին ԲՈ,	5 վ.
Ո՞ր է միածինը ԲՈ,	7 վ.
Ո՞ր է ճարակապատը ԲՈ,	8 վ.
Ո՞ր է լուսընեակը ԲՈ,	7 վ.
Ո՞ր է լուսընթագը ԲՈ,	7 վ.
Ո՞ր է լուսընկայծը ԲՈ,	7 վ.
Ո՞ր է անդրամիկը ԲՈ:	7 վ.

Ութատող շարադրանքի վանկերի 6, 5, 7, 8, 7, 7, 7 յարաբերութեան պարագային բոլոր տողերի եղանակաւորման սկսող դարձուածքներն ընդգրկում են «ուր եւ է» բառերը, որոնք շարադրուելով խառը՝ ներվանկային զարդուորուն ոճում, նոյն ելեւէջակարգի էապէս զանազանուող տարբերակներն են ներկայացնում: Դրանցից զարդուորուն ոճում շարադրուած առաջին եւ 5-ից 8-րդ տողերի «ուր», նաեւ 2-ից 5-րդ եւ 7-8-րդ տողերի «է» վանկերն ընդգրկող գեղերգուող ելեւէջակարգերը տարբերակուելով ընդգրկում են մինչեւ քսանմէկ հընչիւն պարունակող ոլորուն կառույցներ: Շարադրանքի 1, 3, 5, եւ 7 տողերում սկսող դարձուածքներին, առանց միջանկեալ դարձուածքներ կիրառելու, հետեւում են հանգչող դարձուածքները, որոնք հարցական երանգ պարունակելով՝ աւարտում են ձայնակարգի երրորդ աստիճանով: Մնացեալ տողերում սկսող դարձուածքները շղթայւում են ձայնակարգի հիմնաձայնով աւարտուող ամփոփուող, հիմնաւոր պատասխան հանդիսացող (8-րդ տողում վերջին-վերջաւորող) դարձուածքների հետ:

Գալով Ղունկիանոսեան եղանակաւորմանը բնորոշ ընդհանրական յատկանիշներին, նախընտրում ենք այն սկսել երաժշտական յօրինուածքների հիմքերի հիմքը հանդիսացող ձայնակարգային կառույցների գնահատականից:

Խնդիրն առարկայական քննելու համար անհրաժեշտ ենք համարում ստորեւ ներկայացնել մեր հաւաքածուում ընդգրկուած Ղունկիանոսեան միւս չորս օրինակները:

Դրանցից «Ես հիւանդ եմ» երգը մեզ է ներկայացրել Ախալքալաքի Վարեւան գիւղից 47-ամեայ բանասաց Իսկուհի Մարգարեանը: Միւս՝ «Կարօտս կը լցուի» երգի առաջին տարբերակը ձայնագրել ենք նոյն Վարեւան գիւղում 73-ամեայ բանասաց Յովսէփ Սահակեանից: «Կարօտս կը լցուի» երգի երկրորդ տարբերակը երգել է Ախալքալաքի Տուրցիս գիւղից 65-ամեայ բանասաց Հոռոմ Առաքելեան-Սիմոնեանը, որի կատարմամբ ձայնագրել ենք Ղունկիանոսեան երգերից եւս մեկը՝ «Դէմքերնին անդրաբար» սկզբնատողով (տես՝ նոտային յաւելուածների 2, 4, 5 եւ 6 օրինակները):

Ստորեւ ներկայացւում է Ղունկիանոսեան բոլոր 6 օրինակների ձ/կ-ային կառույցների աղիւսակը.

1. «կոունկ, կոունկ, կոունկ	1 Հ 2 / 2 Դ 3 / գեղերգվ. անհետխոն
2. «Ես հիւանդ եմ»	Հ 2 / 1 / 2 Դ 2 Դ 3 / է4/5
3. «ու՞ր է»	5 Հ 2 / 1 / 2 / 2 Դ 1Ֆ/ է5
4. « Կարօտս կը լցուի» տարբ. 1.	/16 2 /12 / 1 / 2 Դ Է5
5. «Կարօտս կը լցուի» տարբ. 2.	Հ 2 / 1 / 2 / 2 Դ 1 / 2 / է5
6. «ղեմֆերնին անդրաբար»	Հ 2 / 1 / 2 Դ 2 Դ 3 / է4/5

Ներկայացւում է Ղունկիանոսեան վեց օրինակներից «Ո՞ւր է Մարիամը քո», «Կարօտս կը լցուի» երգի 2-րդ տարբերակը, «Ես հիւանդ եմ» եւ «Դէմքերնին անդրաբար» երգերը շարադրուած են Ղունկիանոս Կարնեցու գերադասած է5 (կուրնտային հիմնառանցքով էոլական) կամ է4/5 (կուրտո-կուրնտային հիմնառանցքով եւ էոլական) ձայնակարգերում: Դրանցից

Հիմնաձայնից ցած հընչիւններ պարունակում է միայն թիւ 3-ը (05), դիմող ձայնից բարձր 6-րդ աստիճանը առկայ է թիւ 3-ում եւ 5-ում (վերջինս պարունակում է նաեւ 7-րդ աստիճանը):

Առանց 6-րդի միայն 7-րդ աստիճանը կիրառուել են թիւ 2 եւ 6 օրինակներում, ինչը հայ երգարուեստում հոլական ձ/կ-երին բնորոշ եղանակաւորման բանաձեւային յատկանիշներից է: Իոնական-մաժորում շարադրուած միակ օրինակը՝ թիւ 4-ը, հիմնառանցքի հնչիւններից բացի ընդգրկում է 07 ձգտող աստիճանը, այն էլ որպէս զարդահնչիւն՝ «ֆորշլազ»: Բացի այդ, որպէս զարդահնչիւն՝ ընդգծուած «մորդենտ»-ի ձեւով կիրառուել է 2-րդ բարձրացուած աստիճանը, որն, ընդհանուր առումով, սակաւ հանդիպող երեւոյթներից է:

Առանձնայատուկ ձայնակարգային դրսեւորում ունի թիւ 1 օրինակը: Այն շարադրուած լինելով գեղերգուանհեմիտոն (անկիսատոն) ձ/կ-ում ընդգրկում է հիմնաձայն ձգտող, հպանցիկ կիրառութիւն ունեցող 07 գեղերգող աստիճանը: Ձ/կ-ի նման կիրառութիւնը առանձնայատուկ համարում ունի Ջաւախքի (Կարնոյ) ժողովրդական երգարուեստում¹:

Այսպիսով, մեր այս 6 օրինակների սահմանում Ղունկիանոսեան ձ/կ-ային կառոյցները դուրս չեն գալիս Ջաւախքեան ժողովրդական երգարուեստին բնորոշ շրջանակներից: Ղունկիանոսեան մեր գրառումներում ուշադրութեան է արժանի եր-

գերի վանկաչափական կերտուածքը: Այն որոշարկելու համար սահմանափակուենք բոլոր 6 օրինակների առաջին տների վանկաչափական կառոյցները քննելով²:

Թիւ1.

Կրոունկ, կրոունկ, կոունկ,	-. -. -/ -. -10p/	2 մեծավերջ/ մեծավերջ/
Սիրտըս քեզ հետ կրոունկ,	-. -. -/ -. -5p /	1-ի պէոն/ մեծավերջ
Սուր խաչեմէն կուգաս,	-3. -. -. -/ -. -10p/	1-ի պէոն/ մեծավերջ/
Ու՛ր է ընկերդ կրոունկ:	-. -4/-3. -. -/ -. -4p//	մեծավերջ/ ստեղն/ մեծավերջ//

Թիւ2.

Ես հիւանդ եմ	-. -. -4/	4-րդ պէոն/
Ջրգուցայ հեֆիմնեմ,	-. -. -3/ -. -. -3/	վերջատանջ/ 4-րդ պէոն/
Դառը, լափայ դերեմ:	-. -. -4/ -. -. -3p/	4-րդ պէոն/ վերջատանջ/
Ես հիւանդ եմ, ջուր մը կ'ուզեմ	-. -. -/ -. -. -5p/	4-րդ պէոն/ 4-րդ պէոն/
Մայր տիրումիս տես սուրբ:	-. -. -5/ -. -. -3p//	4-րդ պէոն/ վերջատանջ//

1 «Հայ աւանդական երաժշտութիւն» մատենաշարի 9-րդ՝ «Ջաւախքի պարերգեր եւ պարեղանակներ» համահասար ժողովածուում գեղերգուած անհեմիտոն ձ/կ-ում շարադրուած 60 օրինակները քանակապէս հասասար են միևնոյն ժողովածուում գետեղուած էոլական ձ/կ-ում շարադրուածներին, ինչը վկայում է Ջաւախքի երաժշտական կենցաղում նրա լայն կիրառութեան և կարևորութեան մասին: «Հ. Ի. Ե» մատենաշար, 9-րդ պրակ, էջ 105-150, Երևան 2012:

2 Վանկաչափական սխեմատիկ կառոյցներում բանաստեղծական ոտք-միութիւնները, որ ներառում են մեկ եւ անէլի բառերից կազմուած բառակապակցութիւններ, միմեանցից տարանջատուած են շեղագծերով: Հորիզոնական կարծ եւ երկար գծիկներով նշուած են դրանց համապատասխանող վանկերը: Երկար վանկերի կողքին նշուած թուերով նշուած են երկար վանկերի եղանակաւորման տեւողութիւնը՝ 1/8-րդ չափի միաւորի նշանակուած թուի չափով: Լատիներէն «p» տառով նշուած են եղանակաւորման մէջ առկա դադարները՝ առանց նրանց տեւողութեան չափը նշանակելու: Վանկաչափական կերտուածքի ամեն տողի անուանական կարգը տրուած է ըստ Կ. Խոնաքաշեանի «Таблица наименований квантитивных стоп» աղիւսակի: К. Худабашян. Армянская музыка в аспекте сравнительного музыкознания, Ереван, 2011, ст. 185.

Թիւ 3.

Ուր է Մա- րիամբ Բն,	-12.-/-.-.- 6p/	համբոյր/2 համբոյր/
Ուր է որդիին Բն,	-.6/-.-5.-3/ -6/	համբոյր/2 մեծավերջ
Ուր է միածինն Բն,	-.11p/-.-.- -6/	համբոյր/2 համբոյրսաբար
Ուր է նաւա- կապատը Բն,	-.8p/-.-6/-.- 5.-.-6p/	համբոյր/համբ. / 2 մեծավերջ
Ուր է լուսը- նեակին Բն,	p-3.-9p/-.-.- 6.-.-5	/համբոյր/- սունի-համբոյր
Ուր է լուսըն- թագը Բն,	-4.-3p/-.-.- 4.-.-4p/	համբոյր/սունի- համբոյր
Ուր է լուսուն- կայծրն Բն,	-4.-4p/-.-.-.- 6p/	համբոյր/սունի համբոյր
Ուր է անդա- նիկն Բն:	-3.-5p/-4-3p- 5.-.-.-6//	համբոյր/սունի- մեծավերջ

Թիւ 4.

Կարօտըս կը լը- ցուէր,	-..-.-/-.-.-/	Բողաղոտ/ - Բողբոր
Մեկ երկինք բա- ցուէր	-..-.-3.-3/	2 մեծավերջ
Կ'այրին փա- փագներով,	-..-/-.-.-.-/	մեծավերջ/2 մե- ծավերջ
Այս արքայու- թիւն,	-..-.-3.-6p/	2 մեծավերջ- սաբար
Կընդունէր կ'ըրթիսուէր,	-..-.-/-.-.-/	ներքեւ/ներքեւ
Խունկեր կը բու- րէր,	-..-.-3.-p/	2 մեծավերջ- սաբար
Քաղցրասուն սերմերով	-..-.-/-.-.-/	ներքեւ/վերջա- տանջ/
Այս արքայու- թիւն:	-..-.-3-6 p/	ներքեւ/համ- բոյր//

Թիւ 5.

Կարօտըս կը լը- ցուի,	-..-.-/-5.-.-/	ստեղն/ ստեղն/
Մեկ երգինք բա- ցուի,	-..-5/-.-4p/	սունի/ մեծավերջ/

Կ'այրին փա- փագներս,	-./-.-.-.-/-	անգայթ/ սունիհամ- բոյր/
Այս արքայու- թիւն.	-4/-.-.-4.-p/	սաբար/ 4-րդ էպիտրիտ
Կ'այրին փա- փագներս,	-4.-/-.-4.-.-/.	մեծասար/ 2- րդ պէտն/
Այս արքայու- թիւն:	-3/-.-.-4.-p//	սաբար/ 1-ին իոնիկ//
Թիւ 6. Դէմքերնին անդաբար	-.4.-/-5.-.-3/	Բողաղոտ/ Բողբոր
Փրկիկը ըղձա- րար,	-.4/-.-5.-6p/	մեծավերջ/ աւարտեղ
Անգար Սերով- բէական,	-.4/-.-5.-.-5p/	համբոյր/ 2 մեծավերջ/
Գովելն էր ան- գար:	-.4.-/-5.-6//	հատեղ/ համբոյր//

Պարզւում է, որ Ղունկիանոսեան մեր 6 օրինակներից իւրաքանչիւրն իրեն ուրոյն վանկաչափական կերտուածքն ունի: Թիւ 1-ում գերական վերջատանջ եւ 1-ին պէտն ոտքերն են, Թիւ 2-ում՝ 4-րդ պէտնն եւ վերջատանջը, Թիւ 3-ում՝ համբոյրը, սում-քը եւ մեծավերջը, Թիւ 4-ում՝ մեծավերջ, սաբար ու ներքեւ ոտքերը, Թիւ 5-ում՝ կիրառուել են 9 տարբեր ոտքերի համկցու-թիւններ, իսկ Թիւ 6-ում այդպիսիք՝ 5-ն են: Բոլոր օրինակներում առաւել շատ են հանդիպում մեծավերջ եւ համբոյր ոտքերը:

Երգերի եղանակաշինութեան մէջ ձայնակարգային եւ վանկաչափական յեն-քերից բացի մեծապէս կարեւորում է նմուշների առուցուածքային յատկանիշ-ները, որոնք որոշարկելուն մեծապէս նպաստում է ամբողջի բաղադրիչների տրո-հումը: Նկատի են առնում հաւասարա-պէս թէ՛ եղանակաւորման եւ թէ՛ խօս-քային կառոյցներին բնորոշ տրոհումները: Եղանակաւորման պարագային ամբողջա-կան աւարտուն երաժշտական մտքերի՝ պարբերութիւնների բաղա-դրիչները հարց ու պատասխանի ձեւով միաւորուող

երաժշտական նախադասութիւններն են, որոնք, իրենց հերթին բաղկացած են սկսող, միջանկեալ, հանգչող կամ վերջաւորող, միմեանց շղթայուած եւ միահիւստուած ելեէջաչափական միութիւններից՝ դարձուածքներից:

Երգերի պարագային երաժշտութեանն են միահիւստուած խօսքային կառոյցները, որոնք բաղադրիչների տրոհելիս, նախ առանձնացուած են արուել ամբողջական, աւարտուն միութիւն կազմող կառոյցները՝ տները, ապա եւ դրանք տողատուած են, իրենց յանգաւոր կամ առանց յանգաւորման չափածոյ, կամ արձակ բանաստեղծութեան օրէնքներով ձօնուած շինուածքներին համապատասխան:

Բանաստեղծական կառոյցների տողատուած տողերից իւրաքանչիւրը, մեծաւ մասամբ, համընկնում է երաժշտական բաղադրիչներից նախադասութիւնների հետ, որոնցից հարցում պարունակող տողերն եզերուում են հանգչող, իսկ դրանց պատասխանը բովանդակող տողերը՝ վերջաւորող դարձուածքներով³:

Աշուղական երգերը, որ խօսքի եւ երաժշտութեան միաձոյլ միասնութիւն են ներկայացնում, նոյնպէս տողատուած են, ունենալով իւրաքանչիւր աշուղին բնորոշ տողատման կարգ՝ օրինաչափութիւն:

Ղունկիանոս Կարնեցուն անդրադառնալով, պէտք է ասել, որ խօսքային կառոյցների եւ դրանց եղանակաւորման տողերը նոյնական են եւ լրացնում են մեկը միւսին: Ղունկիանոսեան հոգեւոր երգերի եղանակաւորման բնորոշ յատկանիշները խնդրարկելիս, նկատի ունենալով միջանկեալ դարձուածքների փոփոխական անորոշութիւնը, կարեւորել ենք տողերի սկսող եւ հանգչող կամ վերջաւորող դար-

ձուածքների հաստատուն դերակատարումը: Քննութեան առնելով Ղունկիանոսեան օրինակները դուրս ենք բերել նշուած դարձուածքներից առաւել յատկանշականները՝ որակելով դրանք որպէս բանաձեւային կառոյցներ, որոնց թուաքանակը կախեալ է պարունակած ձայնաստիճանների փոխարարութեան շարահիւստութիւնից, ինչպէս նաեւ գերակայող ձայնաստիճանից: Է4/5 եւ Է5 ձ/կ-երում շարադրուած թիւ 2, 3, 5 եւ 6 օրինակների 55 սկսող դարձուածքներից դուրս են բերուել բնորոշ ելեէջաւորների 51) 3-2-3-4-4—: 2) 5-4-3-5-4-4—: 3) 4-5-4-5-3-4-2-3-4—: 4) 1-3-2-1—: 5) 5-6-7-5-6-5—4-3- բանաձեւային կառոյց որոնցից իւրաքանչիւրն ունենալով տարբերակային դրսեւորումներ, ընդգրկում է նրանցում առկայ ձայնաստիճանների չափակարգային ամենատարբեր յաջորդականութիւններ:

Առաջին 4 կառոյցներում կարեւորում են վերջնահընչիւնները (1-3-ում 4-րդ, իսկ 4-րդում հիմնահընչիւնը), 5-րդ բանաձեւում ընդգծում եւ կարեւորում է ձայնակարգի 5-րդ աստիճանը: Քննուող խմբաքանակից հանգչող 24 դարձուածքներից, այս նոյն կարգով, դուրս ենք բերել տարբեր վերջնահընչիւններով աւարտող 6՝ 1) 5-4-3-5-4—3-2-1—, 2) 3-4-2-3-2—, 3) 5-4-3-2-3—, 4) 5-7-4—3—, 5) 4-5-4-3-2-3-4—7, 6) 5-6-4-7-5-5—, բանաձեւային կառոյց⁴:

Դրանցից միայն 3-րդն ու 4-րդն են, որ աւարտում են ձ/կ-ի նոյն՝ 3-րդ աստիճանով: Նշուած ձայնակարգերով

3 Տների վերջին տողերի վերջաւորող դարձուածքներն ընդունուած է անուանել՝ վերջին-վերջաւորող:

4 Բանաձեւային կառոյցներում թուերով նշուել են տուեալ ձ/կարգի (կամ համանման ձայնակարգերի) մեկը միւսից հորիզոնական գծիկներով տարանջատուող ձայնաստիճաններն՝ առանց դրանց ստոյգ տեւողական յատկանիշի: Երկար հորիզոնական գծերով նշուել են կառոյցում կարեւորուող ձայնաստիճանները, փոքր թուերով նշուել են երկրորդական համարուող զարդահնչիւնները:

օրինակների 31 վերջաւորող դարձուածքներից դուրս է բերուել երեք՝ 1) 3-4-2-3—2—1-1—, 2) 2-1—4-3-2-1-3-1-1—, 3) 107—3-4-2-5-1—4-1-1—5 բանաձեւ, որոնց մէջ հաշուի են առնուել անգամ մանր թուագրերով նշուած դարդահանչիւնները:

Նախընթաց օրինակներից էականօրէն տարբերուող թիւ 4-ը, որ Ի5 ձ/կ-ում է չարադրուած, բանաստեղծական շարադրանքով հայոց վիպերգերին բնորոշ տասնմեկոտնեայ քառատողեր է բովանդակում եւ եղանակաւորմամբ վանկայինի գերակայութեամբ խառը՝ վանկային-ներվանկային ոճում է շարադրուած: Մեր կողմից կատարուած տողատմամբ, տողերում սկսող եւ հանգչող, սկսող եւ վերջաւորող դարձուածքները չեն առաձնանում՝ զանազանում: Դրանցում, անգամ, չեն կիրառուում միջանկեալ դարձուածքներ:

Հետեւաբար, բանաձեւային կառոյցներ դուրս բերելիս նկատի են առնուել դարձուածքների միասնութիւն ներկայացնող տողերն ամբողջութեամբ: Ինը սկսող-հանգչող դարձուածքներից դուրս են բերուել երեքը՝ 1) 5-5—5-5—5-5—5-5—4-3—: 2) 4-4-4-4-4-4-4-4—4-4—3+23—: 3) 4-4-4-4-4-3-4-4-3-3-2—: Սկսող-վերջաւորող ինը դարձուածքներից նոյնպէս դուրս են բերուել երեքը՝ 1) 4-4—4-4—3-3—3-3—2-1071—: 2) 2-3—4-4-3-4-3-4-3-3-3—3—232—1071—: 3) 3-3-3-3—3-3—2-2-2-3—2-1071—:

Անհամիտոն ձ/կ-ում շարադրուած թիւ 1-ի տաղաչափական կառոյցը մեր տողատմամբ տրոհուել է երկու անհամաչափ տների: Դրանցից 1-ինը՝ 6-ավանկ յանգաւոր տողից բաղկացած քառատող (վերջին 2 տողերը կրկնուող) շարադրանք ունի, իսկ 2-րդը, որը հնգատող լինելով նոյնպէս յանգաւոր շարադրանք ունի, վանկական անհամաչափ՝ 10, 7, 7, 6, 5 կերտուածք է ներկայացնում: Դարձուածքների պարունակութեան առումով, երկու տներում էլ

տողերն ունեն միայն սկսող եւ հանգչող կամ վերջաւորող դարձուածքներ: Այստեղ եղանակաւորման պարզ ընթացքի բերումով՝ կարիքը չի եղել միջանկեալ կապող դարձուածքների: Տասնմեկ սկսող դարձուածքից դուրս է բերուել երկուսը՝ (3) 1-2—3-3—, եւ 5 (2)-3—, հանգչող եօթից նոյնպէս երկուսը՝ 3-3—2-, եւ 2-2—3-2—1—, վերջաւորող երեքից միայն մեկ՝ 1-2-07-1— ելեւէջաչափական բանաձեւ:

Հոգեւոր բովանդակութիւն ունեցող Զաւախքի աշուղական մեր միւս երկու օրինակներից բանասաց Արաքսիա Թուամասեանի ներկայացրած «Աստուած մեր խաչուաւ» երգի բանաստեղծական տեքստը, որ բովանդակում է Յիսուս Քրիստոսի խաչելութեան խորհուրդը, իր կերտուածքով տարբերում է Ղունկիանոսեան տաղաչափական կառոյցներից եւ ներառում է տասնոտնեայ շարադրանք ունեցող եօթ համաչափ երկտող (տես՝ նոտային յաւելուածի թիւ 7 օրինակը): Երկտողերը եղանակաւորմամբ հարց ու պատասխանի սկզբունքով միաւորուած են երաժշտական պարբերութիւնների մէջ: Այն $3/4$ չափակարգում ծաւալուելով շարադրուած է $4/5$ ձայնակարգում, որի հիմնական եղանակաւորումն ընդգրկում է մեծ վեցեակ (*as-f1*) հնչիւնածաւալը, սակայն հանգչող եւ վերջաւորող դարձուածքներին, որպէս վերջնահանգիւն կիրառուած սեպտիմային եւ օկտաւային *nachschlag*-ների բերումով երգի հնչիւնածաւալն ընդլայնում է մեծ իննեակի (*as-b1*) չափով: Երգի առաջին տան մեղեդին, երկրորդում թեթեւակի տարբերակուելով մնում է հիմնականում անփոփոխ բոլոր տների ընթացքում, իսկ նրա վանկաչափական կերտուածքը, որ իւրաքանչիւր տողի 2 մեծավերջ-սաբաբ կառոյցի կրկնակի շղթայում է պարունակում (—.-, —.-, —.-/—.-, —.-, —.-), անընդմէջ նոյնութեամբ կրկնուելով՝ յի-

շեցնում է եղանակաւորման վիպերգերին բնորոշ պատմողական ընթացակարգը:

Հաւաքածուի վերջին օրինակը, որը գրանցուել է 1970թ. Ախալքալաքի Տուրցիս գիւղում, բանասաց Սաթենիկ Կիրակոսեանից՝ «Երանելի եւ հրաշալի» խօսքերով է սկսում եւ հիմնականում բովանդակում է Մարիամ Աստուածածնին ուղղուած գովասանք: Սակայն նրանում տեղ են գտել շարականներին բնորոշ որոշ փոխակերպուած արտայայտութիւններ (Փառք Հօր եւ Որդուն եւ Հոգուն սրբոյ, ամէն), որը, հանդիպում է նաեւ հոգեւոր աղօթքներում: Երգի եղանակաւորումը եւս միատարր չէ՝ աշուղական երգերին բնորոշ ելեւէջակարգերին միահիւստուած են հոգեւոր աղօթքներին յատուկ դարձուածքներ:

Նմուշը Հանգամանալից վերլուծելուն մեծապէս նպաստել է մեր կողմից կատարած ամբողջի մասերի բաժանումն ու դրանց տողատումը: Այսու շարադրանքը տրոհուել է երաժշտաբանաստեղծական 5 մասի:

Բանասացի յիշողութեան թերացման հետեւանքով, իմաստային առումով, աղաւաղուած են երգի երկրորդ եւ վերջաւորող՝ հինգերորդ մասերը: Առաւել ամբողջական է Աստուածածնի գովասանքը բովանդակող առաջին մասը, որ տրոհուել է յանգակապ պարունակող՝ 8, 8, 8, 10, 8, 4, 10 վանկանի եօթնատողի, Աստուածածնին միտուած, յորդոր-խնդրանք պարունակող 2-րդ մասը՝ 12, 9, 9, 9 վանկանի, առանց յանգաւորման քառատողի, հոգեւոր աղօթք բովանդակող 3-րդ մասը՝ 5, 6, 5 վանկանի եռատողի, 1-ին եւ 2-րդ մասերի բովանդակային սեղմագիրը հանդիսացող 4-րդ մասը՝ 8, 10, 12 վանկանի եռատողի եւ բովանդակութեամբ առկախ մնացած վերջին մասը՝ 8 եւ 5 վանկանի երկտողի (տես՝ նոտային յաւելուածի թիւ 8 օրինակը):

Եղանակաւորմամբ երգը շարադրուած է g1 հիմնաձայնն ռնեցող է4/5

ձ/կ-ում, որտեղ ներկայացուած մասերից իւրաքանչիւրն աւարտում է վերջին — վերջաւորող՝ c2—b1a1—a1—b1—a1-g1-g1—դարձուածքի տարբերակներով: Բոլոր տողերի հանգչող դարձուածքներն ունեն իրար բաւական մօտ, տարբերակուող երկու՝ c2-ով եւ b1-ով աւարտուող ելեւէջակարգեր⁵: 17 սկսող դարձուածքներից 14-ը տարբերակները հանդիսանալով հանգչող դարձուածքների աւարտում են c2-ով եւ միայն երեքն են եզերում b1-ով:

Միջանկեալ դարձուածքներից զուրկ տողերը շարահիւստելով նոյնական ելեւէջադարձումների բնաւ չկրկնուող տարբերակներից, շնչական միասնութիւն են ներկայացնում:

Այսպիսով: Զաւախքի (Կարնոյ) հոգեւոր բովանդակութիւն ունեցող աշուղական երգերի մեր հաւաքածուի զգալի մասը՝ 8-ից 6-ը, աշուղ Ղուկկիանոս Կարնեցու գրչին են պատկանում եւ կրում են նրա ստեղծագործ մտքի դրոշմը, որը դրսեւորում է նրան յատուկ խօսքային կառոյցների շարադասութիւններում եւ նրանց միահիւստուած եղանակաւորման երաժշտախօսքային շինուածքներում:

Մեր միւս օրինակներից «Աստուած մեր խաչուաւ» երգն իր տաղաչափական կերտուածքով տարբերւում է Ղուկկիանոսեան կառոյցներից եւ ներառում է տասնոտնեայ երկտողերով շարադրանք, որոնք երաժշտականօրէն հարց ու պատասխանի սկզբունքով միաւորում են երաժշտական պարբերութիւնների մէջ: 3/4 չափակարգում ընթացող առաջին տան մեղեդին քիչ

5 c2- ու աւարտող դարձուածքները տարբերակն են c2-c2-- c2- c2--b1c2d2--c2-c2d2b1--c2a1- c2-- -ի, b1-ով աւարտող դարձուածքները տարբերակն են c2--c2--c2-b1-c2-d2--c2-c2-d2b1-c2a1b1- -ի: Բերումս հնչիւնագրերում մանր տառերով գրառումս նոտանիշերը «ֆորշլագ»-ներ են: Նոտանիշերի միջեւ նշումս կարն եւ երկար գծիկներով նշումս են հնչիւնների մօտաւոր տեսողութիւնները:

տարբերակելով կրկնում է բոլոր տներում եւ իր միակար շարադրուածք ունեցող վանկաչափական (—.-.-.—) մեծավերջ-սաբաբ կերտուածքով մօտ է հայոց վիպերգերին բնորոշ պատմողական ընթացակարգին:

Մեր վերջին օրինակի՝ բանասաց Սաթենիկ Կիրակոսեանի երգած «Երանելի եւ հրաշալի» աշուղական երգի վերլուծութիւնից պարզուեց, որ նրանում համադրուել՝ միահիւսուել են աշուղական երգն

ու հոգեւոր աղօթքը եւ որ նման իրար շատ մօտ երգատեսակների համադրումներից զերծ չի մնացել նաեւ Զաւախքի երգարուեստը: Երեւոյթը բնականոն համարելով, ասենք, որ երաժշտախօսքային կառոյցների փոխադարձ ներգործութիւններն օժանդակում են նոր տիպի երգատեսակների ստեղծմանը եւ որ այն ժողովրդական երգարուեստում առաջընթաց զարգացման նախապայմաններին է:

ԿՈՒՆԿ, ԿՈՌՒՆԿ, ԿՈՌՒՆԿ

Վառվառա կոյսի երգերից

$\text{♩} = 120$

1 Կր - ունկ, Կր - ունկ, Կր - ունկ,
2 Սիր - դրս քեզ հեղ Կր - ունկ,
3 Սուրբ խա - չն - մեն գու - քաս,
4 Ո՛ր է ըն - - - գն - րդ Կր - ունկ,
5 Սուրբ խա - չն - մն - նր գու - քաս,
6 Ո՛ր է ըն - - - գն - րդ Կր - ունկ:
7 Այս, ին - ծի տա - րան Վն - րին Սա - շա - դան,
8 Հր - րեշ - տագ - նին թոփ է - դան,
9 Վառ - վաճ սրբ - դիս քուր կուղան,
10 Լու - - սա - վոր - չա խա - րեր,
11 Լուս հավ - դիս հա - մար:

Կրուունկ, կրուունկ, կրուունկ,
Սիրդքս քեզ հեղ կրուունկ,
Սուրբ խաչնմեն գուքաս,
Ո՛ր է ընգերդ կրուունկ,
Սուրբ խաչնմեն գուքաս,
Ո՛ր է ընգերդ կրուունկ:

Այս, ինձի տարան Վերին Սաչադան,
Հրեշտագին թոփ Լդան,
Վառվաճ սրդդիս քուր կուղան,
Լուսավորչա խաքեր,
Լուս հավդիս համար:

ՈՒՐ Է ՄԱՐԻԱՄԸ ՔՈ

$\text{♩} = 80$

1. Ու՛ր Է Մա՛րիա մը՛ քո,

2. Ու՛ր Է ո՛րք - ղին՝ քո,

3. Ու՛ր Է Մի-ա-ծի-նը՛ն քո,

4. Ու՛ր Է ճա՛րա - կա - պա - ար՝ քո,

5. Ու՛ր Է լու՛սը՛ն յա - կը՛ն քո,

6. Ու՛ր Է լույս - ըն - քա - զը՛ քո,

7. Ու՛ր Է ա՛նդ - րա - նի - կը՛ն քո,

8. Ու՛ր Է ա՛նդ - րա - նի - կը՛ն քո:

9. Արտասանություն՝ - Մարե՛ ջան, ի՞նչ է եղել...

10. Օ՛, իմ՝ աը - զան՝ ղից,

11. Որ՝ ես՝ քեզ՝ ծը-նա,

12. Այ, իմ՝ ըս - ար՝ յաս,

13. Որ՝ քեզ՝ լի - ա - - - ցու - ցի...

14. Վա՛յ իմ՝ ա - չա՛ ցրս,

18 Որ ես քեզ տեսա,
19 Վա՛յ իմ ա - կան - ջա 6 - ցըս,
20 Որ ես քո ձայնը լսեցի,
21 Վա՛յ իմ բն - 6 - րա - նին,
22 Որ ես քեզ խոսեցի,
23 Վա՛յ ի - մը լեզ 3 - վին,
24 Որ ես քեզ ա - դեր - սեցա:
25 Վե՛ 3 - կյալ էն 3 բազ - կին,
26 Որ ըզքեզ խա - չին:

Ու՞ր է Մարիամը քո,
Ու՞ր է որդին քո,
Ու՞ր է Միածինը քո,
Ու՞ր է Դարակապատը քո,
Ու՞ր է լուսնյակը քո,
Ու՞ր է լուսնբազը քո,
Ու՞ր է անդրանիկը քո,
Ու՞ր է անդրանիկը քո:

Արտասանություն - Մարե ջան, ի՞նչ է եղել...

Օ~, իմ արգանդից,
Որ ես քեզ ծրնա,

*) Ըստրյաս - ստինքներ

Այ իմ ըստրյաս,*)
Որ քեզ լիացուցի...
Վա՛յ իմ աչացրա,
Որ ես քեզ տեսա,
Վա՛յ իմ ականջացրա,
Որ ես քո ձայնը լսեցի,
Վա՛յ իմ բերանին,
Որ ես քեզ խոսեցի,
Վա՛յ իմը լեզվին,
Որ ես քեզ աղերսեցա:
Վե՛կյալ էն բազկին,
Որ ըզքեզ խաչին:

ԵՄ ՀԻՎԱՆԴ ԵՄ

Աշուղ Դուրյանուսի երգերից

$\text{♩} = 182$

1 8 Ես հի - վանդ եմ...

2 8 Ջրգ վե-ցա հե-քիմ-նե - րեն, դա - ռը, լա-վա դե - դե-րեն:

6 8 Ես հի-վանդ եմ, ջուր մը գողեմ...

8 8 Մայր Տի-րուհիս տե-սա սուրբ:

10 8 Դրո - զը ներքս մո-ղե-ցու ցի ար բա-ուքյան ախ - պը - րին, 3

14 8 Բե - րա - նըս խիստ պարա - - - զե-ցավ...

15 8 Ախ, ար - - - բա - ու քյուն...

17 8 Տա - րու - քե - նով սիր - դըս է - րե - ցավ,

19 8 Լեղ - քըս ու քո - քըս րոտ - նը - վե - - - ցան...

23 8 Մայր Տի - րու - հիս տե - սա սուրբ:

25 8 Աշ - քիս լի - սը նը - վա - դե - ցավ,

27 8 Բե - րա - նըս խիստ պա - րա - զե - ցավ:

29 8 Ես հի-վանդ եմ, ջուր - մը գող - զեմ...

31 8 Մայր Տի - րու - հիս տե - սա սուրբ:

31
8
Կըն - դըրք ներ կը - ցըրվիեր, խում - գեր կը վառիեր,
33
8
Ա - նու - շիգ հո - դե-րով...
34
8
Այս, ար - քա - ու - բյուն...

Ես հիվանդ եմ...
 Ջրվեցա հեքիմներեն, դառը, լափա դեղերեն:
 Ես հիվանդ եմ, ջուր մը գուզեմ...
 Մայր Տիրուհիս տեսա սուրբ:
 Պրոգրներըս մողեցուցի արքաության ախպրին,
 Բերանըս խիստ պաքագեցավ...
 Այս, արքաություն...
 Տաքութենով սիրդըս էրեցավ,
 Լերքըս ու բոքըս բլունդեցան...
 Մայր Տիրուհիս տեսա սուրբ:
 Աչքիս լիսը նրվադեցավ,
 Բերանըս խիստ պաքագեցավ:
 Ես հիվանդ եմ, ջուր մը գուզեմ...
 Մայր Տիրուհիս տեսա սուրբ:
 Կընդրքներ կըցըրվիեր, խումգեր կըվառիեր,
 Անուշիգ հողերով...
 Այս արքաություն...

ԿԱՐՈՏՈՍ ԿԼՅՎԵՐ

Աշուղ Դունկիանուսի երգերից

$\text{♩} = 160$

1
8
Կա - թո - արս կը - լըց - վեր, մեկ եր - կինք բաց - վեր,
2
8
Կայ-րիմ վա վազ - նե - թով, ախ, ար - քա - յու - բյուն,
3
8
Կըն - դրուկ - ներ կը - բըխ - վեր, խըն-կեր կը - բու - բեր,
4
8
Քաղ - ցրա - սուն սեր - մե-րով, ախ, ար - քա - յու - բյուն:

5
8 Ու - րախ սրբ - րու - հանք - ներ, սի - րուն կու - սա - նանք - ներ,

6
8 Կը - չալ - վին քը - նար - ներ, նը - վա - զա - րան - ներ,

7
8 Եր - գեմ հրեշ - տակ - ներ, ծամ՝ մե - դե - սիկ - ներ,

8
8 Զաղ - ցրա-սուն սեր - մե - րով, ախ, ար - քա - յու - քյուն,

9
8 քան, Խըն - կյա-նուն ա - պի - կար, մեկ աչ - քով տե - - -

10
8 - սավ Յուր զար - դա - րանք - նե - րով, ախ, ար - քա - յու - - -

11
8 Ու - րախ սրբ - րու - հանք - ներ, սի - րուն կու - սա - նանք - ներ,

12
8 Կը - չալ - վին քը - նար - ներ, նը - վա - զա - րան - ներ,

13
8 Եր - գեմ հրեշ - տակ - ներ, ծամ՝ մե - դե - սիկ - ներ,

14
8 Զաղ - ցրա-սուն սեր - մե - րով, ախ, ար - քա - յու - քյուն:

15
8 Դեմ - քեր - նին մե - նա - վո - րա-զարդ, խեկ - քի և զա - րար,

16
8 Թե սե - րով - քեք մեկ քան, որ էլ - ներ Ար - քան,

17
8 Խըն - կյա - նուն ա - պի - կար, մեկ աչ - քով տե - սավ



Կարոտըս կրորցվեր, մեկ երկինք բացվեր,
 Կայրիմ փափագներով, ախ, արքայություն,
 Կրնդուրուկներ կրթրվալեր, խրնկեր կրթուրեր,
 Քաղցրասուն սերմերով, ախ, արքայություն:
 Ուրախ սրբբուհանքներ, սիրուն կուսանանքներ,
 Կրչավին քրնարներ, նրվագարաններ,
 Երգեմ հրեշտակներ, ծամ՝ մեղեսիկներ,
 Քաղցրասուն սերմերով, ախ, արքայություն:
 Ուրախ սրբբուհանքներ, սիրուն կուսանանքներ,
 Կրչավին քրնարներ, նրվագարաններ,
 Երգեմ հրեշտակներ, ծամ՝ մեղեսիկներ,
 Քաղցրասուն սերմերով, ախ, արքայություն:
 Դեմքերնին մենավորագարդ, խեղի և զարար,
 Թե սերովբեք մեկ քան, որ Լյներ Արքան,
 Խրնկյանոսն ապիկար, մեկ աչքով տեսավ
 Յուր զարդարանքներով, ախ, արքայություն:

ԿԱՐՈՏՍ ԿԼՅՎԵՐ

Աշուղ Դունկիանոսի երգերից

$\text{♩} = 100$

Կա - րո-դըս կը - լըցվեր, մեկ եր - կինք բաց - վեր,
 Կայ-րիմ փա - փագ - նե - րով, ա-խ, ար - քա - յու - րյուն,
 Կայ - րիմ փա - փագ - նե-րով, ա-խ, ար-քա - յու - րյուն:
 Կրն - դրուգ ներ կը - քրխ վեր, խրն - կեր կը - րու - րեր՝
 Քաղ-ցրա-սուն սեր - մե - րով, ա-խ, ար - քա - յու - րյուն,
 Քաղ - ցրա-սուն սեր - մե-րով, ա-խ, ար - քա - յու - րյուն:

ԴԵՄՔԵՐՆԻՆ ԱՆԴՐԱԲԱՐ

Աշուղ Դուսկխանուսի երգերից

$\text{♩} = 120$

Դեմքերնին անդրաբար փրկիր ըղձարար,
 Դեմքերնին անդրաբար փրկիր ըղձարար,
 Արդար սերտըյական, գովելն էր արդար,
 Արդար սերտըյական, գովելն էր արդար,
 Խրեկյանսն ապիկար, լուս աչքով տեսար
 Յուր զարդարանքներով, ախ, արքայություն,
 Յուր զարդարանքներով, ախ, արքայություն:
 Հրեշտակներ սանթուրներով, սազներով,
 Հրեշտակներ սանթուրներով, սազներով,
 Երգեյին գրվերեկնային նազներով,
 Լեզուն անուշ, խոսքերն անուշ, ինքն անուշ:
 Լեզուն անուշ, խոսքերն անուշ, ինքն անուշ:

Դեմքերնին անդրաբար փրկիր ըղձարար,
 Դեմքերնին անդրաբար փրկիր ըղձարար,
 Արդար սերտըյական, գովելն էր արդար,
 Արդար սերտըյական, գովելն էր արդար:
 Խրեկյանսն ապիկար, լուս աչքով տեսար
 Յուր զարդարանքներով, ախ, արքայություն,
 Յուր զարդարանքներով, ախ, արքայություն:
 Հրեշտակներ սանթուրներով, սազներով,
 Հրեշտակներ սանթուրներով, սազներով,
 Երգեյին գրվերեկնային նազներով,
 Լեզուն անուշ, խոսքերն անուշ, ինքն անուշ
 Լեզուն անուշ, խոսքերն անուշ, ինքն անուշ:

ԵՐԱՆՇԼԻ ԵՎ ՀՐԱՇԱՆԻ

$\text{♩} = 120$

Երա - նե - լի և հրա - շա - նի,
 Դու հը-րեշ - տակ ես, գուք քա - ժա - նի,
 Աստ - վա - ծա - ծին կույս Մա - րի - ամ,
 Դու ես պա - հա - պան, դու ես օ - գոնա - կան,
 Աստ - վա - ծա - ծին կույս Մա - րի - ամ:
 Աստ - վա - ծա - ծին...
 Դու ես պա - հապան, դու ես օգ - նա - կան,
 Լը-սե և պա - յե, շիղգե կառա - վա - ռե:
 Ա - սեմ քեզ, Աստ - վա - ծա - ծին,
 Արին գը-թու-քյամը ով քաղց - ըա - խոս,
 Դու եղիր սըր - տիս խոս - քեր Հի - սու - սի:

ԱՍՏՎԱՆԾ ՄԵՐ ԽԱՉՎԱՎ

♩ = 120

5 Աստ - ված մեր խաչ - վավ
 8 Խա - չա - վայ - տին քով,
 11 Յա - վոտ քան ե - դավ
 14 Օ(ո)ղ - բաց զա - վա - կին:
 18 Ով կայ - ծակ ճայ - քեց
 21 Օղ - բաց զա - վա - կին,
 24 Ե - րեք դի - դե - րով
 Տա - ռապ - յալ հո - գին:

8 Փառք Հո - թը և Ողորմ
 և Հոգ - վույն սրբ - քոյրն,
 24 Ա - մե - են, Հի - սուս ջան:
 25 Աստ - վա - ծա - ծին
 և կույս Մա - թի - ամ,